թագիրքը սակայն, վերստին կը տպագրուի Պոլիս, Օրթագիւղի մէջ 1841 ին, Ստեփանոս պատրիարքի օրով, Մայր եկեղեցւոյ Առաքել քհ. ին ձեռքով, որ սխալմամբ Բաղիշեցի Վարդան վրդ. ի վերագրած է սոյն Աղօթագիրքը։

Շատեր ալ տգիտաբար Վարդան վրդ. Մարաթացիին կ'ընծայեն Ս. Տեղերու այս Աղօթագիրքը։ Վարդան վրդ. Մարաթացին տարբեր անձ մ'է, և իր գործն է Ժողովածոյ Առակաց Վարդանայ գիրքը և թագաւորազն Պաղտինի խնդրանքով գրած է բարոյական Իբ. ճառեր։ Մեր կարծիքով Աղօթագիրքին հեղինակը, ինչպէս ըսինք, մեր նշանակած Վարդանն է։

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, ՄԱԼԿԱՐԱՑԻ.— Մբ. Ծ. 1835 ին. Ձռ. 1866 ին. Տեսուչ Կիպրոսի 1871 ին. ՏԲ. (1871—1872). կը հրաժարի Միաբանութենէ 1875ին, կը միաբանակցի Սսոյ վանքին եւ եպս. կը ձեռնադրուի Աբրահամ անուամբ։ Վարած է առաջնորդական եւ քարոզչական պաշտօններ Պոլսի եւ գաւառներու մէջ։ Հակաեկեղեցական գործերուն հետեւանքով, Դպանճեան եւ Նիկողայոս եպս.ներու հետ 1895 ին կը զրկուի եկեղց. պաշտօնակատարութենէ, իր ընկերները կը զբաղեան և ներման կ'արժանանան թէև, բայց Աբրահամ եպս. 6-7 տարի կը մնայ յամառեալ. Կիլիկիոյ Սահակ կթղ. ի կողմէն կը ներուի իրեն և կ'ընտրուի կթղ. Տեղապահ Կիւրինի։ Կը վախճանի 1905ին (Արարատ, 1905 էջ 432)։

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՊՈՒՂՏԱՆՑԻ.— Հաւանաբար ուխտաւոր վարդապետ մը՝ որ 1709 ին Ս. Աթոռի պարտուց վճարման կը մասնակցի, հին հաշուետուումարի մը համաձայն։

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ, ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ.— Մբ. աւագանի անունը Գէորգ. միաբան կ'արձանագրուի 1834 ին. Ձռ. 1842 ին. կնիքը 1842. կանանց խոստ. կը վախճանի 1854 ին։

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՎԱՆՑԻ.— Մբ. 1803 ին։

ՎԱՐԴԱՆ ՔՀ. ԲԱՂԻՇԵՑԻ.— Հալէպի Ս. Յակոբ վանքի հոգեւոր վերնայարկի Թիւ 4 խուցին շինութիւնը հոգացած է Վարդան քհ. Բաղիշեցին հետեւեալ յիշատակարանին համաձայն. «Յիշատակ է խուցը Տ. Վարդանի, և մօրն Սուլթանին և որդի